


**Լևն ՉՈՒԳԱՍՉՅԱՆ. Արշակ Ֆերվաճյան. Երևան: Փրիմիանֆո, 2011,
- 188 էջ, 123 նկար:**

«Փրիմիանֆո» տպագրատանը «Հայ արվեստի վարպետներ և գանձեր» խորագիր ներքո լույս տեսավ մատենաշարի առաջին պրակը, որը նվիրված է վաստակաշատ նկարիչ Արշակ Ֆերվաճյանին (1866-1947): Վերջինիս ստեղծագործական ուղին ներկայացնող պատկերագիրը կազմել և հեղինակել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի Հայ արվեստի պատմության ՅՈՒՆԵՍԿՕ-ի ամբիոնի վարիչ, արվեստագիտության դրկուոր, պրոֆեսոր Լևն Չուգասյանը, որը Ա. Ֆերվաճյանի արվեստի լավագույն գիտակներից է. նրա գրչին են պատկանում նկարչի մասին պատմող միշտը հոդվածներ ու գեկուցումներ:

Ինչպես նշված է գրքի ծանոթության մեջ, «աշխատության հիմնական նպա-



տակն է ըստ ամենայնի լուսաբանել մոռացության մատնված ազգային մեծ արվեստագետի գեղագիտական ժառանգությունը և ցույց տալ նրա կատարած նշանակալից դերը հայ գեղանկարչության և արվեստագիտության զարգացման գործում»: Ու թեպետ Ա. Ֆերվաճյանը բնակ «մոռացության մատնված» արվեստագետներից չէ (այդ է վկայում պատկերագրի վերջում բերված մատենագիտական

ընդարձակ ցանկը, էջ 159-167), այնուհանդեք նկարչի արվեստն իսկապես կարու էր գիտական առավել համակողմանի ուսումնափորձության: Եվ պես է ասել, որ Լ. Չուզասյանի հեղինակած պատկերագիրքն այդ ուղղությամբ կատարված կարևոր քայլ է:

Արվեստաբանը գիրքը կազմել ու շարադրել է, հենցելով Ա. Ֆերվաճյանի՝ Հայաստանի ազգային պատկերասահում եղած ստեղծագործությունների, ինչպես նաև նկարչի՝ նոյն թանգարանի հուշածնուագրային բաժնում, նրա անձնական ֆոնդում ամբարված լուսանկարների, արխիվային վավերագրերի, արվեստագետի անտիպ ծեռագրերի ու նամակների, մասնություն Ա. Ֆերվաճյանին վերաբերող հոդվածների ու հաղորդումների, ցուցահանդեսների կատարոգների, վարպետի կազմած նկարացանների և անհրաժեշտ այլ նյութերի վրա: Դրա հետ մեկտեղ Լ. Չուզասյանը ծանոթացնել ուսումնամիջերեւ օգտագործել է նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վեհադանում և թանգարանում, Վեմետիկի Ս. Ղազար կրտու Սլուհքարյան միաբանության բանգարանում, Նյու Յորքի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում, Բոստոնի «Հայրենիք» լրագրի խմբագրատանը, Հայ ճարտարապետության ուսումնասիրման կազմակերպության (Երևան) արխիվի, լուսանկարիչ Վահան Քոչարի (Երևան), նկարչի ազգականներ Աշոտ Կիլիկյանի (Երևան) ու Իզաբելլա Ֆերվաճյանի (Թրիլիսի) և այլոց մասնավոր հավաքածուներում պարփակված առանձին կտավներ, հազվադեպ լուսանկարներ, արվեստագետի կյանքի և գործունեության հետ կապված տեղեկություններ:

Լ. Չուզասյանի հայերեն բնագիրը մերուայան ուղղագրությամբ վերաշարադրել է բանասիրության թեկնածու Հայկանուշ Սեսրույանը: Օտար զննեցողներին Ա. Ֆերվաճյանի ստեղծագործության մասին պատկերացում են տալիս անգերեն և ռուսերեն ծավալուն ամփոփումները:

Գիրքն աչքի է ընկնում ճևավորման ու տպագրության բարձր որակով, «Փրիմա թիմֆո» երաժարակածանուն հասունական պրոֆեսիոնալ խնամքով:

Այն բացվում է Լ. Չուզասյանի երախտագիտության խոսքով՝ ուղղված բոլոր նրանց, ովքեր նյութապես ու բարոյապես աջակցեն, իրենց մասնակցությունն են բերել հասորի նախապատրաստման ու երաժշտական աշխատանքներին: Հեղինակը հասուն շնորհակալությամբ է հիշում Լու Անգելեսի «Արարատ-Էսքիջյան» բանգարանի հետ ունեցած իր համագործակցությունը՝ առանձնապես կարևորելով «այդ հաստատության անձնվեր և կամավոր ֆոնդապահ Մագի Մանգասարյան-Գոշինի խորհրդաներն ու օգնությունը» (էջ 6): Այս ներկայացվում է նվիրատունների՝ տարրեր կազմակերպությունների և մասնավոր անձանց անվանացաններ:

Գրքի նախարանում ու դրան հաջորդող ներածության մեջ Լ. Չուզասյանը կարծ բնուրագրում է Ա. Ֆերվաճյանի ստեղծագործությունը, մատնամշում նրա տեղման ու դերը նոր շրջանի հայ կերպարվեստում: Նկարչի կյանքն ու արվեստը լուսարանող կենսագրական ակնարկը լի է ուշագրավ, նաև նորահայտ փաստերով ու տեղեկություններով: Շարադրանքի հենց սկզբնամասում Լ. Չուզասյանը նկատում է, որ Ա. Ֆերվաճյանը դարձրանի այն եղակի հայ արվեստագետներից էր, որոնց գեղարվեստական գործունեությունը չի սահմանափակվել մեկ ասպարեզով, այլ ստացել է լայն և բազմապահ դրսուրությունը: Բավական է ասել, որ իր երկարատև կյանքի ընթացքում, հաստոցային նկարչությունից զատ, նաև կերտել է նաև որմնանկարներ, ծևավորել քատերական ներկայացումներ, ստեղծել հայկական բորբոքամների ու դրամանիշերի էսքիզներ, կազմել ճարտարապետական ուրույն նախագծեր, հանդես եկել բանաստեղծական գրվածքներով ու ասույթներով, կերպարվեստին ու ճարտարապետությանը, նոյնին բանական քայլ քատարում վերաբերող հոդվածներով...

Ընթեցողին քայլ առ քայլ ծանոթացներով նկարչի կյանքում բախսորոշ նշանակություն ունեցող հանգամանքներին Լ. Չուզասյանը զուգահեռաբար նկարագրում ու վերաբերում է այս կամ այն տարիքում վարպետի վրձնած հաստկանշական աշխատանքները: Հետևելով Տրապիզոնում ծնված և իր նախնական կոթությունը տեղի ազգային վարժարաններից մեկում ստացած Ա. Ֆերվաճյանի հետագա «ողիսականին», գրքի հեղինակը հասուն ուշագրություն է դարձնում նրա մասնագիտական կրթությանը, ներկայացնում ուսուցիչներին՝ առաջին հերթին հիշատակելով 1883-ին Կ. Պոլսում բացված Կայսերական գեղարվեստի վարժարանի պրոֆեսոր Մալվասորը

Վալերիի և Հռոմի Ս. Դուկաս ակադեմիայի պրոֆեսոր Չեզարեն Մակարիի անոնները, որոնք խվապես նպաստել են հայ արվեստագետի գեղագիտական հայացքների ու գեղարվեստական ճաշակի կողմնորոշմանը:

Ս. Ֆերվածյանի կենսագրության մեջ նշանակալից իրադարձություն էր 1888-ին Վենետիկի Ս. Ղազար կղում նրա հանդիպումը Միսիքարյան միաբանության անդամների, հաստկապես մեծանուն հայագետ Ալոնդ Ալշամի հետ, որի խորհրդական ընդօրինակում է միաբանության գրադարանի հայկական հին ծեռագրերը գարդարած միջնադարյան ծաղկութեր Իգմատիոս Հոռոմոսու, Սարգիս Պիծակի, Ավագի, Թորոս Տարոնցու և այլոց մանրանկարները:

Անդրադառնալով Ս. Ֆերվածյանի ուսանողական աշխատանքներին՝ Լ. Չուազյանը կանգ է առնում նկարչի մի շարք դիմանկարների վրա՝ հասուն ուշադրություն իրավիրելով ներկայումս Վենետիկի Միսիքարյան միաբանության քանզարանին պատվանող «Ալոնդ Ալշամի դիմանկարի» (1891) վրա, որն օժնված է գեղարվեստական որոշակի արժանիքներով, սակայն ինչ-ինչ պատճառներով դուրս է մնացել մասնագետների տեսադաշտից: Ս. Ֆերվածյանի ուսանողական հաջող աշխատանքներից է «Ավետարան ընթերցող քահանան» (1889, <ԱՊ>) յուղանկարը, որն աչքի է ընկնում գոյների ներդաշնակ համադրությամբ, լրսաստվերային կենդանի խաղով և որտեղ առավել ցայտում դրսորվել են ելքրոպական դասական արվեստի հանդեպ նկարչի սերն ու խոնարհումը:

Ս. Ֆերվածյանի համար ստեղծագործական առումով բեղմնավոր էին ուսումնավայր 1891-1895 թվականներին, Վիեննայում նրա անցկացրած տարիները, երբ ազատ արվեստագետի կյանքով ասլող նկարիչը մի շարք դիմանկարների և բնանկարների հետ մեկտեղ ստեղծում է նաև իրադարձային, թեմատիկ խոշոր, լայնաշունչ գործեր: Դրանցից Լ. Չուազյանն առանձնացնում է «Հայաստանի ազգային պատկերասրահում պահվող «Արևելյան փոստ» («Ժուրնալ առիհանդակն Անատոլիայում», 1892) և «Սուլթան Սուլհամմեդ Առաջինի դամբարանը Բրուսայում» (1894) յուղաներկ կտավները, որոնցում նկարչի ստեղծագործական ձեռագիրը բյուրեղանում ու միանգամայն անկաշկանդ է դառնում:

Ս. Ֆերվածյանի կենսագրության անոռողական էջերից էր 1896-ին՝ ելքրոպական մի շարք երկրներում շրջագայելուց հետո, Դրիմ կատարած ուղևորությունը, որտեղ նա հանդիպում է մեծ ծովանձարիչ Հ. Ալվազովսկու հետ, որից ուսանելի դասեր է առնում և հետագայում ծովային բազում տեսարաններ վրձնում՝ էլ ավելի ընդարձակություն ու միանգամայն անկաշկանդ է դառնում:

Ս. Ֆերվածյանի մասնագիտական գիտելիքների խորացման ու հմտությունների կատարելագործման տեսակետից կարելու դեր են խաղացել Ռուսաստանի մայրաքաղաքում՝ Սանկտ Պետերբուրգում նրա անցկացրած տարիները (1896-1903): Հենց այստեղ՝ Ս. Պետերբուրգում է սկիզբ առնում ու հետագայում սերտանում Ս. Ֆերվածյանի և նրա հասակական ծնունդով վանեցի մեկ այլ նկարչի՝ Փանոս Թերեմովյանի մտերմությունն ու ստեղծագործական փոխադարձ կապը, որի մասին, ի դեպ, խոսում է նաև նրանց առանձին կտավների միջև նկատվող նմանությունը: Ռուսաստանի մայրաքաղաքում Ս. Ֆերվածյանը կարծ ժամանակում լուրջ հաջողությունների է հասնում: Բավական է ասել, որ հայ արվեստագետն ընտրվում է Ռուս գրանցարիչների կայսերական միության անդամ, դատանալով վերջինիս այլազգի միակ ներկայացուցիչը: Նա մասնակցում է քաղաքում անընդհան բացվող ցուցահանդեսներին, որտեղ ջրաներկ գործերից բացի հանդիսատեսի դասին է հանձնում նաև իր յուղաներկ նորաստեղծ կտավները՝ «Պետերբուրգի Ամառային այգու» (1897), «Պետերբուրգի կնոջ դիմանկարը» (1898), «Քոյարի աղջիկը» (1902), «Օրիորդ Պոնսի դիմանկարը» (1902) ևն: Նույն տարիներին նա անհատական ցուցահանդեսներ է կազմակերպում ուսսական կայսրության հայաշատ վայրերում՝ Բարումում (1899), ասա Թիֆլիսում (1900): «Եսուաքրիի է, որ Թիֆլիսի հայ մանուլը, մասնավորապես «Մուրճ» ամսագիրն ու «Մշակ» շաբաթաթերթը, ողջունելով Ս. Ֆերվածյանին և գովերով նրա արվեստը, այլուհանդերձ ակտուաներով նկատում են. «Լավ է, բայց հայկական չէ»: Ինչպես նշում է Լ. Չուազյանը, այդ դիտողությունից ազդված 34-ամյա նկարիչը շուրջ երեք ամիս ճամփորդում է Արևելյան Հայաստանի տարբեր վայրերով, ի մոտու ծանոթանում հայ

արվեստի հուշարձաններին, նկարում ճարտարապետական կիսավեր ու կանգոն կոթողները, առավելապես՝ Անիի հրաշակերտ շինույթունները։ Տարիներ անց, վերիշելով հայրենի երկրից ու հայկական միջնադարյան շինարվեստից ստացած իր առաջին տպավորությունները, ծերունի նկարիչը խոստովանում է. «Լեզվով չի պատմվի այն փլուզումը, որ իմ մեջ տեղի ունեցավ, երբ աշքերովս տեսա այն ամենը, ինչի մասին քիչ ու միշտ տեսյակ էի միայն հասուլենու աղքատիկ, լուս տեղազորություններից, որ մեկ մեկ զարդարված էին եվրոպացի ճամփորդների գործերից քաղած պատահական պատկերներից» (էջ 47): Լ. Չուգասյանի խոսքերով, ենց այդ ժամանակ է Ա. Ֆերվաճյանի մեջ «ճայն առնում ազգային արժանապատվորյունը», և նա հաստատ վճռում է «հայության արժեքն ու արժանիքը շիմացողների համար վեր հանել» հայ ժողովրդի գեղարվեստական հանճարի կատարյալ դրսուրումներից մեկի՝ մեր միջնադարյան ճարտարապետության «անապարտ դիմապատկերը» (էջ 47):

Վյատին Ա. Ֆերվաճյանը հաճախ է շրջում Արևելյան Հայաստանի տարրեր վայրերում, քանից լինում Անիում, նկարում հարազատ երկրի գեղեցիկ տեսարանները, այդ թվում նաև՝ Սևանա լճի, Արագած լեռան, Մասիսի պատկերները։ Բայց նկարչի ստեղծագործության մեջ առանձնահատուկ տեղ են զբաղեցնում նախրնաց դարի առաջին երկու տասնամյակներում նրա կերպած բազմաթիվ ջրանկարներն ու մատիտանկարները, որոնցում արվեստագետը զանասիրաքար, վավերագրական ճշությանը բորբն է հանճնել հայկական եկեղեցիների ու տաճարների, բերդերի ու պարիսպների, աշխարհիկ շենքերի ու շինությունների ճարտարապետական արտաքին տեսքը, ինչպես նաև պատմական Հայաստանի տարրեր զավաների հայ կանանց գունագեղը, նախշուն տարազները։ Եվ միանգամայն իրավացի է Լ. Չուգասյանը, ով ընթեցողին ներկայացներով Ա. Ֆերվաճյանի շորջ քանի գործը, եղրակացնում է. «Երեք Ա. Ֆերվաճյանը միայն այս հնագիտական, ազգագրական աշխատանքը կատարած լիներ, դա էլ բավական էր, որ նրա անունը ուկե տառերով հավերժանար մեր մշակույթի նվիրյալների շարքում» (էջ 49): Ծարտնակերով ու հիմնավորելով իր միտքը՝ պատկերագրի հեղինակը շեշտում է, որ Ա. Ֆերվաճյանի վավերական այդ նկարների նշանակությունը գնալով էլ ավելի մեծանում է: «Ժամանակի հողովույթի հետ, - գրում է Լ. Չուգասյանը, - բազմապատկվում է Ա. Ֆերվաճյանի փաստանկարների արժեքը: Այդ երկերն անգին են ոչ միայն այն պատճառով, որ պատկերված կորուններն անցյալում լուսանկարված չեն եղել կամ այժմ գտնվում են Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս, այլև որովհետև դրանց մեծ մասն այսօր արդեն գոյություն չունի: Ինչ վերաբերում է հայութիների տարազներին, ապա անհրաժեշտ է իհշել, որ 1915թ. Սեծ եղեռնի և դրան հաջորդած տարիներին հայ ժողովրդի վիճակված փորձությունների հետևանքով ոչչացան հազարավոր մարդիկ ու անհետացան հայ ազգագրության համար բացառիկ արժեք ունեցող մասունքներ, այդ թվում և հայկական տարազների բազմատեսակ նմուները» (էջ 49):

1906-ին, երբ Ա. Ֆերվաճյանը կրկին հայտնվում է Վիեննայում, նա իր առավել բնորոշ աշխատանքների, հիմնականում Անին ցուցադրող ջրաներկ թերթերի գունագոր լուսանկարներով մի փունջ բացիկներ ու պատկերաքարտեր է հրատարակում, որոնք անհրաժան տարածվում և ջերմ ընդունելիքություն են գտնում հայ հասարակայնության, մտավոր խավի լայն շրջաններում։ Ոգեսրված արվեստագետոր ցանկանում է Անիի հուշարձաններին նվիրված իր նկարաշարքը համարել և ամբողջացնել նոր կտուպներով ու հետագայում դրանք տպագրել մի պատկանելի մատյանի տեսքով։ Այդ մասին նա լավատեսությամբ գրում է ականավոր հայագետն Հակոբոս Թաշյանին եղած իր նամակներից մեկում. «Զգիտեմ իմ մատուցությունը, հավատացած եմ, որ կիաջողի գլուխ բերել այս գործը, որի նման բան հայր դեռ չի արել» (էջ 63): Ա. Ֆերվաճյանն իրոք ընդլայնում-ընդարձակում է Անին պատկերող իր նկարաշարքը, բայց նրան այդպես էլ բախս չի վիճակվում լուս աշխարհ բերել մեծածախս այդ ճնիս պատկերագիրքը, ինչպես ապարդյուն, անկատար է մնում նաև վարպետի մեկ այլ երազանքը՝ առանձին ալբոնով հրատարակել ազգային տարազներով հանդերձված հայութիների վերոհիշյալ նկարները։

Անցած դարի առաջին երկու տասնամյակները Ա. Ֆերվաճյանի ստեղծագործական կյանքի ամենաբեղուն տարիներն էին: Հենց այդ ժամանակ է նկարիչը վրձնել և Թիֆլիսում (1900, 1908), Բաքումում (1902) ու Պյատիգորսկում (1902) բացված իր ան-

հաստական ցուցահանդեսներում ներկայացրել կովկասցի ծեր լեռնականի (1903), դպիով կմոջ (1905), Սիրայել վարդապետ Տեր-Սիբասյանի (1907), եզիստացի գեղջուկ տղայի (1909) դիմանկարները, «Մանուկ Հայաստան (Սաստոցի հայ կիճը)» (1903) և «Մի դրվագ ուսու-ճապոնական պատերազմից» (1905) թեմատիկ պատկերները, ավետարանական կերպարներով ու պատմություններով ներշնչված «Տիրամայրը մանկան հետ» (1909), «Աղօքքը Գերսենմանի պարտեզում» (1910) և «Հարկի դրամը» (1910) մեծավիր կտավները, որոնցում հատակ երևում է Ա. Ֆերվաճյանի՝ ընդհանուր առմանը իրապաշտական, երեսն ոռմանտիկ երանգավորում ձեռք բերող, իսկ որոշ դեպքերում (հատկապես լուսանկարների օգնությամբ կատարված դիմանկարներում) ակադեմիական «ավարտվածության» և նույնիսկ նաստորալիստական ծշտամության հասնող գեղարվեստական լեզուն ու ոճը:

Նշված աշխատանքներից զատ, Ա. Ֆերվաճյանը բավականին ժամանակ է տրամադրում նաև հայկական եկեղեցիների արտաքին ու ներքին հարդարման գործիք։ 1906-ին նա յուղաներկ պաստառներով, որոնց նկարներում ու քանդակագործ դրվագներով է զարդարում Թիֆլիսի Քամոյանց Ս. Գևորգ եկեղեցին (1930-ական թվականներին, Վրաստանի իշխանությունների հրահանգով, իիմնահատակ ավերվել է), 1909-ից մինչև 1914 թվականը նվիրվում Թիֆլիսի Կուսանաց անապատի Ս. Ստեփանոս եկեղեցու (սա էլ, իր հերթին, արդեն մեր օրոք, քարուքանի է արվել, դրսից ձևախեղվել ներսից նկարապատվել ու վերածվել է «վրացական» տաճարի) նորոգման ու հարդարման աշխատանքներին, Ռուսաստանի Արմավիր քաղաքում բարեզարդում հայկական Ս. Գևորգ եկեղեցին (կործանվել է Երկրորդ աշխարհամարտի տարիներին ֆաշիստական օդուժի ուժքակոծության ժամանակ), իսկ Առաջին աշխարհամարտի նախօրեին վերակառուցում, ձևափորում ու հարդարում Կարսի Ս. Խոաչ եկեղեցու բնմը, խաչկան ու դրմերը, զինակիր խորանում տեղադրելով իր իսկ վրձնած «Տիրամայրը մանկան հետ» սրբապատկերը։

Դրան զուգահեռ Ա. Ֆերվաճյանն իր ուժերն է փորձում նաև բատերական ձևավորման ասպարեզում։ Նրա էսքիզներով են պատրաստվել 1916-ին Թիֆլիսում ներկայացված՝ Լևոն Չամբի «Կայսր» և Դերենիկ Դեմքրճյանի «Դատաստան» պիեսների թեմական դեկորներն ու զգեստները։

1918-ի ամռանը Հայաստանի նորանկախ պետության դեկավար Արամ Սառույանի հանձնարարությամբ Ա. Ֆերվաճյանը կատարում է հայկական քորադրամների և նամականշերի նախանկարները, որոնցում «արյևստագետն ընտրել է հայության համար խորհրդանշական երևույթներ ու մանրամասներ։ զոյգ Սահսները, ճախարակով հայ գեղջկուիկն, օճին քրաստող արծիվը և այլն» (էջ 86)։ Սակայն 1920-ին Փարիզի և Լոնդոնի տպարաններում վերջապես բազմացված այդ արժեքությունը քաղաքական իրավավակի բերումով՝ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման պատճառով, այդպես էլ չեն դրվում շրջանառության մեջ։

Նույն թվականի գարնանը Փարիզում՝ Լուվրի Դեկորատիվ արվեստի, իսկ մեկ տարի անց նաև Լոնդոնի «Վիկտորիա և Արքերու» բանգարաններում բացվում են Ա. Ֆերվաճյանի՝ հայկական ճարտարապետության կորողներն ու ազգային տարագները ներկայացնելու ցուցահանդեսները, որոնք «առաջ են բերում հայ և օտար քննադատների հիացմունքը և հայտնությունը դառնում քրիստոնեական արվեստի մասնագետների համար» (էջ 92)։

1922-ին նկարիչը մեկնում է ԱՄՆ, որտեղ և անցնում են նրա կյանքի վերջին քսանինգ տարիները, որոնց մասին եղած տեղեկությունները սակավարիկ են։ Բայց Լ. Չուզասյանին հաջողվել է արվեստագետի կենսագրության այդ շրջանին վերաբերող լրացուցիչ նոր տեղեկություններ գտնել։ Նախորդ շրջանների համեմատությամբ, Ամերիկայում Ա. Ֆերվաճյանի ստեղծագործական ակտիվությունը՝ նվազել, իսկ գեղարվեստական գործունեության ոլորտը նեղացել է, թեև նա անհատական ցուցահանդեսներ է ունեցել Նյու Յորքում (1922), Չիկագոյում (1923), Փրինստոնում (1923) և Բուստոնում (1932), մասնակցել գեղարվեստական այլ սոուզատեսների, դասախոսություններ կարգացել հայ կերպարվեստի մասին, տպագրել հոդվածներ ու բանաստեղծական թախուու տողեր, արվեստի պատմությանը նվիրված աշխատություններ զբեկ։ Իսկ կյանքի վերջում Ա. Ֆերվաճյանի հրատարակած «Ճմ մտքերը»

(Քոստոն, 1941) վերտառությամբ ասույթների գիրքը, *L. Չուզասզյանի բառերով*, «անգին վկայություն է արվեստագետնի մոտականությունների, աշխարհայացքի, գեղագիտական ճաշակի և կնճասպորձի մասին» (էջ 113):

Պատկերագրի հեղինակը հասուկ երախտագիտությամբ է նշում Հայաստանի Առաջին հանրապետության նախկին հյուպատոս Մանվել Տեր-Մանվելյանի անունը, որի շնորհիվ Նյու Յորքում նյութական վատքար պայմաններում հայտնված ու հուսարքած նկարիչը ապահով և բարեկեցիկ տաճքը է գտնում Քոստոնում, ուր դատում է Տեր-Մանվելյանների հյուրընկալ ընտանիքի լիրակ անդամը:

Ամերիկայում *Ա. Ֆերվաճյանի* վրձնած նկարների մեծ մասը բնականից, երևակայությամբ կամ իշխողությամբ, երբեմն նաև՝ լուսանկարների օգնությամբ ստեղծված պորտրետային աշխատանքներ են, որոնք հիմնականում լուծված են ռեալիստական կամ ակադեմիական ավանդապաշտ եղանակներով, դեղնամոխրագույն կամ շագանակագույն «քանգարանային» երանգներով։ Պատկերագրում վերարտադրված այդ կտավներից մասն տպավորություն են բողոքում, մասնավորապես, ԱՄՆ-ում Հայաստանի Առաջին հանրապետության դեսպան Արմեն Գ-արոյի (Գարեգին Փաստրմաջան), ՀՅԴ կուսակցության հիմնադիրներ Քրիստափոր Միքայելյանի, Արմն Զավարյանի և Ստեփան Չորյանի (Ռուսում), վաղմիջնադարյան հայ վիլխառիք, թարգման, եկեղեցական գործիչ Եղիշիկ Կողրացու դիմանեկարները։ Ավելի աշխույժ տրամադրությամբ, բազմերանգ ու վառ գույներով են օժտված կարմիր գլխաշորով և կապուտաշյա շիկահեր աղջիկների ժպատկեն պատկերները։ Հոգերանական խոր մեկնարանություն ստացած, դրամատիկ կերպարներից է Գրիգոր Նարեկացու դիմանեկարը։ Ա. Ֆերվաճյանի այս ստեղծագործությունը, *L. Չուզասզյանի կարծիքով*, «ցուցադրում է հայության բոլոր ժամանակների ամենամեծ բանաստեղծին հոգեկան վերացման և «ի խորոց պատի» իր խսքը Աստծուն հասցնելու պահին» (էջ 104):

Նոյն տարիներին նկարչի կերտած պորտրետային այլ աշխատանքներից պատկերագրում իշխատակված են Արմենուի և Հայկ Տեր-Մանվելյանների, ինչպես նաև ամերիկայի լուսանկարիչ Ջոն Կարոյի դիմանեկարները։ Սկիսոքահայ մամուլում հաճախ է վերատպվել 1930-ականներին Ա. Ֆերվաճյանի վրձնած, այսօր Հայաստանի ազգային պատկերասրահում գտնվող «Կեսարի դիմարը» («Հիսուսի դիմքը դրամի հանդեպ») յուղանկարը, որը բացահայտ աղերսներ ունի Տիգիանի համանուն ստեղծագործության հետ։

Ամերիկայում *Ա. Ֆերվաճյանի* գեղարվեստական գործունեությունը չէր սահմանափակվում միայն հաստոցային նկարչությամբ։ Ինչպես պարզվում է, արվեստագետը գրադիվել է նաև հայկական տարրեր եկեղեցիների արտաքին ու ներքին հարդարման աշխատամքներով և ճարտարապետական նախագծերով, որոնցից է Բուստի գերեզմանատներից մեկում հայ ականավոր դերասան Հովհաննես Զարիֆյանի շիրմին դրված հուշարձան-խաչքարը։

Ա. Ֆերվաճյանի կյանքի ընդհատվել է 1947-ի հոկտեմբերի 7-ին, երբ Խորհրդային Հայաստանի կառավարության կողմից նա տունդարձի հրավեր էր ստացել և արդեն պատրաստվում էր հայրենիք վերադառնալ։ Դրա վոխսարեն մեկ տարի հետո Երևան հասավ ու հողին տրվեց երա աճյունը։ Արվեստագետի կտակի համաձայն, հայրենիք ուղարկվեցին և Հայաստանի պետական պատկերասրահում հանգրվան գտան նրա լսվագույն նկարները, որոնք ներկայացվեցին 1948-ին այսուղև բացված ցուցահանդեսում։ Հետագայում հանրապետության մայլաքաղաքում կազմակերպվեցին նկարչի հետմահու ևս մի քանի ցուցահանդեսներ (1956, 1964, 1998 և 2009):

Գրքի ավագույն *L. Չուզասզյանի* կրկին շեշտում է հայ կերպարվեստում նկարչի «քողած խոր ակուր» և եղրակացնում։ «Այդ ավանդը նախ պայմանավորված է այն հանգամանքով, որ նա մեր գեղանկարիչներից առաջինը ըմբռնեց հայ հին ճարտարապետության գեղագիտական արժեքը և իր ջրաներկ աշխատանքների պատկերման առարկա դարձներով այն, պարբերաբար սկսեց «վերակենդանացնել» լավագույն կորողները... Նա իր գործունեկերների մեջ նաև առաջինն ըմբռնեց հինավորց քանդակագործության, մանավանդ եկեղեցիների ու վանքերի ճևավորումների անանց հմայքը և հարյուրավոր մատիտանկարներ ստեղծեց՝ ընդորինակեռով դրանց լավագույն նմուշները։ Ա. Ֆերվաճյանը հայ նկարչիներից առաջինը և այն էլ միշտ

ժամանակին նկատեց հայ կանանց տարազի գեղեցկությունը... Բացի այդ, նա հայ արվեստի անդաստան բերեց ազգային-ազատագրական պայքարի հերոսական թևմանները... Ի վերջո, նա հայ արվեստը հարստացրեց կանացի սրանչելի դիմաններ-ներով» (էջ 115-116): Ընդհանուր առմամբ համաձայնելով հայ կերպարվեստում Ա.Ֆերվաճյանի վաստակին տրված այս գնահատականների և կարծիքների հետ, այդուհանդերձ հարկ ենք համարում նշել, որ Ա.Ֆերվաճյանից առաջ, դեռ 1890-ական թվականներին, իր առանձին աշխատանքներում հայ ճարտարապետության գեղազիտական արժեքն արդեն բնրոնելու ու պատկերման առարկա էր դարձրել Վարդգես Սուրենյանցը (իշխանը բեկուց վերջինիս հետևյալ կտավները. «Էջմիածնի տաճարի զանգակատունը», 1891, «Անիի Կուսանաց վաճրի ավերակները», 1892, «Գայանեի եկեղեցին», 1893, «Հռիփսիմեի եկեղեցին Էջմիածնի մոտ», 1897), իսկ հայ կանանց տարազի գեղեցկությունը նկատել է դեռ Հակոբ Հովհաննյանը, ել չենք խոսում նոյն Սուրենյանցի մասին: Մասսամբ կարելի է համաձայնել նաև Լ.Չուգասազյանի այն տեսակետին, թե «Ա.Ֆերվաճյանը հայ նկարիչներից առաջինն է սկսում պատմական անձանց երևակայական դիմանկարների պարբերական ստեղծման գործը» (էջ 104), քանի դրանից շատ ավելի վաղ պատմական անձանց երևակայական կերպարներին պարբերաբար անդրադարձել են արևելահայ և արևմտահայ մի շարք վարպետներ՝ Հովհաննես Աֆանայանցը («Գրիգոր Լուսավորիչը և հայ հոգևոր ու աշխարհիկ գործիչները», 1837), Հովհաննես Պեյզատը («Գրիգոր Լուսավորիչ», 1844, «Թագելու և Քարորույնեռու առարյալները», 1866), Ստեփանոս Ներսիսյանը («Սեպով Մաշտոց», 1882, «Սահակ Պարթև», 1882), Սամբրե Մարկոսյանը («Գրիգոր Լուսավորիչ, որդիր և քոռումը», 1896), Պետրոս Մրասյանը («Սեպով Մաշտոց տեսիլքը», 1896), Եղիշե Թաղլուսյանը («Գրիգոր Լուսավորիչ տեսիլքը», 1901), Վարդգես Սուրենյանցը («Գրիգոր Լուսավորիչը», 1916, IV դարի հայ եկեղեցական գործիչներ Սդրնա Ս.Հակոբի և Ներսես Ս Սեծի գուգապատկերը, 1917) և այլոր:

Գտնում ենք, որ Լ.Չուգասազյանը, ինչպես և ենց ինքը՝ Ա.Ֆերվաճյանը, շափականցնում են իտալացի նկարիչ Ջեզարտ Մակարիի (1840-1919) ստեղծագործական կարությունները՝ նրան բնութագրելով որպես «մեծահամբավ», «ասմենամեծ», «անմահ», «հանճարեղ» վարպետ (էջ 21, 22, 48), այնինչ ՀՀ դարի իտալացի հեղինակավոր արվեստաբան Ռոբերտ Լոնգին խաստ բացասական է արտահայտվում պահպանողական-ավանդամոյ, հետադիմական դիրքերում կանգնած այդ ակադեմիստի մասին¹: Ի դեպ, դատնարկ Ա.Ֆերվաճյանի ուսուցիչներին, ցանկալի էր հիշատակել նաև հայազգի նկարիչ և քանդակագործ, Օսմանյան գեղարվեստական վարժարանի հիմնադիրներից մեկի՝ Երվանդ Ուլանի անունը, առավել ևս, որ գրախոսվող պատկերագրում վերատպված (էջ 142), աշակերտության տարիներին Ա.Ֆերվաճյանի վրձնած «Ֆորտունայի տաճարը Հռոմում» (1890, ՀԱՊ) ջրանկարը թե՛ ընտրված մոտիվով, թե՛ կոմպոզիցիոն կառուցվածքով և թե՛ կատարման եղանակով ուղղակիորեն ազդված է Երվանդ Ուլանի «Անիի տաճարը» (1876) ջրանկարից²:

Ա.Ֆերվաճյանին նվիրված պատկերագրում կան առանձին անշտուրյուններ, որոնք կարող են ապակողմնորոշել ընթերցողներին: Այսպես, գրքի 111 և 112 էջերում՝ կենսագրական ակնարկում և լուսանկարներից մեջի բացատրագրի մեջ, սիսալ է նշվել դերասանապետ Հովհաննես Զարիֆյանի անունը. Հովհաննեսն այստեղ Հարություն է դարձել: Ա.Ֆերվաճյանին է վերագրվել և պատկերագրում գետեղվել «Զիրենի» (Թիֆլիս, 1915) գրական ժողովածորի կազմի զարդարող՝ իրավանում Գևորգ Բաշինջաղյանի վրձնին պատկանող Արարատ լեռան բնանկարը (էջ 76)³:

Գրքի վերջում Լ.Չուգասազյանի բերած՝ նկարի հեղինակած և նրա մասին եղած գրականության ցանկից դուրս են մնացել Ա.Ֆերվաճյանի՝ նոյն «Զիրենու» մեջ

¹ Steu. Понти Роберто. От Чимабуэ до Моранди. Москва, “Радуга”, 1984, с. 249 и 251.

² Երվանդ Ուլանի այս նկարի գունավոր վերատպությունը տես. Kürkman Garo. Armenian painters in the Ottoman Empire (1600–1923). Volume 2, Istanbul, Matusalem publications, 2004, p. 680-681.

³ Այդ ժողովածորի նկարագրադիման հեղինակների մասին տես. Աղասյան Ա., Հայ կերպարվեստի գարգացման ուղիները XIX-XX դարերում, Եր., 2009, էջ 40 և 240:

տպագրված ճամփորդական նորերը⁴, ինչպես նաև արվեստագետի ստեղծագործական ուղին այս կամ այն շափով լուսաբանող՝ Կ. Պոլսի Սուրբ Փրկիչ ազգային հիվանդանոցի տարեգործի, Թեոդիկի «Ամենուն տարեցույցի» և 1923-1926 թվականներին Բուժարեսուսն Հակոբ Միքունու խմբագրությամբ լույս տեսած «Նավասարդ» հանդեսի հոդվածները⁵:

Սեր նկատումներն ու դիտարկումները բնավ չեն ստվերում կամ նսնմացնում Ա. Ֆերվաճյանի ստեղծագործության լավագույն գիտակներից մեկի՝ պրոֆեսոր Լ. Չուզավայանի աշխատության գիտական արժանիքները: Կատարվել է իսկապես զնահատելի ու շնորհակալ գործ, ընթերցողի սեղանին է դրվել վաղուց սպասված, անհրաժեշտ մի գիրք՝ հասցեագրված ոչ միայն մասնագետներին՝ արվեստաբաններին և հայ կերպարվեստի պատմաբաններին, այլև ավագ դպրոցի աշակերտներին, գեղարվեստական բուհերի և համալսարանների ուսանողներին, արվեստասեր հանրությանը: Սա հայ վաստակաշատ նկարիչ Ա. Ֆերվաճյանին երբեք նվիրված առավել հանգանաճական ու լիակատար ուսումնասիրությունն է, որը հուսալի հիմք է դնում այդ ուղղությամբ հետազա առավել մանրախույզ պրայտումների համար:

Արարատ ԱՂԱՍՅԱՆ

⁴Տե՛ս Ֆերվաճյան Ա., Եգիպտոսի բուրգերը և Սփիհնըրը // Զիբենի. գրական ժողովածու հայ գրականագետների, Թիֆլիս, «Սամուլ» ընկերություն, 1915:

⁵Տե՛ս Ֆերվաճյան Ա.//Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Կ. Պոլս, 1921, էջ 244: Նկարիչ Ֆերվաճյանը Լոնդոնում//Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Կ. Պոլս, 1922, էջ 200: Արշակ Ֆերվաճյան // Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Վիեննա, 1925, էջ 197: Վաչէ [Սիրունի Հակոբ, ճողովյան Հակոբ], Վրձնի երկու փարպետներ (Թերլեմեզյան և Ֆերվաճյան)/Նավասարդ, Բուխարեստ, 1923, Ս հատոր, Ս պրակ, էջ 32: Վաչէ [Սիրունի Հակոբ, ճողովյան Հակոբ], Ամերիկայի գեղարվեստի բանասերմերի միացյալ համագումարը // Նավասարդ, Բուխարեստ, 1923, Ս հատոր, Դ պրակ, էջ 127: Վաչէ [Սիրունի Հակոբ, ճողովյան Հակոբ], Հայկական ճարտարապետությունը // Նավասարդ, Բուխարեստ, 1925, Բ տարի, Ս պրակ, էջ 224: Արշակ Ֆերվաճյան // Հնդարձակ տարեգիր Սուրբ Փրկիչ ազգային հիվանդանոցի, Ստամբուլ, 1948, էջ 425: